



Տարեկան գինն է 140 ռուբլ. 75 ռուբլ.
Մեկ ժամուցումը տողին 5 ռուբլ.
Ստորագրութիւնները կանխիկ են:
Տարագրութիւնները ամեն ամսոյն 1 թ.
և 15 թ. կը սկսին:

Դուրս երթալիք լրագրներուն համար
ժամքը առ հարկ վրայ է:
Լրագրոյ վերաբերեալ ցածակ կամ որ
եւ իցէ գրութիւն խորագրին պիտի
ուղղուի. եւ ասոնց համար ժամք
ը իրիզից վրայ է:

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՈՏԱՆԻՆՈՒՊՈԼԻՍ ԹՎ ՕՐԱՏՈՏՈՍ

Իւրաքայնէն եկած լուրերը մինչև լատ.
օգոստոս 10 կը հասնին:

Գաղղեացոց Ա. Կարօլէն կայսրը
լատ. օգոստ. 9ին Եայնս գնաց ուր ա.
մին տարուան սովորութեան համեմատ
գաղղեական զօրաց բանակը գումարուած
է որ զնուարական կրթութիւններ ու
փորձեր պիտի ընէ կայսեր ներկայու
թեամբը:

Եվեթի թաղաւորն ալ Կարօլէն
կայսեր հետ Եայնս գացեր է, ուր եր.
հու. օր կենալէ ետեւ Երազուրի նաւա.
բանը տեսնելու պիտի երթար և անկէջ
Նագրիս պիտի անցնէր:

Իրաւոյն թաղաւորին Գաղղիս եր.
թաղը հոկտեմբեր ամսոյն մնացեր է:

Արսուի թէ Գաղղից Աթրասպուրկ
քաղաքին մէջ պիտի տեսակցին երկու մե.
հասակները:

Հոռի կառավարութիւնը իր պա.
տերազմի պաշտօնակց Մերտո կարդինալին
Գաղղից կայսեր դէմ ըրած թշնամանա.
ցը համար գոհացուցիչ հատուցում մը
չտուաւ Գաղղից, որով լուրջայն հա.
ճութիւն տուած կերեւի Սէրտո կարդե.
նալին ըրածին:

Ես պատճառաւ Գաղղից լրագիր.
ները կրակ կտրած են Հոռի կառավա.
րութեան դէմ և կը իրեն որ անոր այս րն.
թաղը ընդհանուր Գաղղեացոց ազգին
անարգանք մը ըլլալով, Գաղղից կառա.
վարութիւնը չիմար անտարբեր մնալ:

Ազգից լրագիրները կըսեն թէ այս
դէպքը Հոռի խնդրոյն լուծումը կրնայ
փութացնել, ըստ որում Գաղղից զօր.
քերուն պարտեալ են Հոռի մնալը դժ.
ուար կերելի:

Արքէն բողոքն ալ կան թէ Գաղ.
ղից կառավարութիւնը բանակցութեան
սկսած է Իտալից կառավարութեան հետ՝
Հոռի պահպանութիւնը իտալական զօ.
րաց յանձնելու համար:

Պուրպուսեան կողմնակցութիւնը օրէ
օր տկարանալու վրայ է Կարօլէի մէջ:
Կատարմանն անդադար հալածուելով
կը ջրուին և իրենց զինուորները կը բռ.
նուին:

Կարօլէի մէջ յայտնուած վերջին դա.
ւադրութեան մէջ բազմաթիւ եկեղեցա.
հաններ մատ ունենալով, ամենն ալ ձեր.
բակալ եղան:

Իտալից կառավարութեան խնդրած
500 միլիոն ֆրանքի փողը ինն անգամ
աւելի ստորագրող պտնելով, Ա կըթոր
Խմանուէլ թագաւորը անուանակառու.
թեան աստիճան և կոմս պատուանուէր
ձորհեց իր գանձուց պաշտօնակց Պ. Պաս.
թօմիին:

Հունգարիայի ազգային ժողովը եր.
կար վիճարարութենէ ետեւ Եստրիցի կայ.
սեր վերջին հրամանագրին պատասխան մը
գրելու որոշում ըրած է Ես պատասխա.

նով Հունգարիայի ազգային ժողովը իր
բոլոր պահանջներն հաստատ կը բռնէ,
և կայսեր հրամանագրին ամեն կէտերը մի
առ մի հերքելով Եստրիցի հետ բանակ.
ցութիւնները կտրուած կը հրատարակէ:

Ես պատասխանը համաձայնութեամբ
ընդունուեցաւ Հունգարիայի երկու խոր.
հրատարակներէն:

Ար կարծուի որ այս պարագային մէջ
Եստրիցի կառավարութեան առաջին ը.
նէրը Հունգարիայի ազգային ժողովը
լուծել է:

Ա արշաւայէն եկած վերջին լուրերը
կը ծանուցանեն թէ նոր կռիւ մը եղեր է
տէրութեան զօրքերուն ու ժողովրդեան
մէջ, և այս վերջիններէն մարդ մը սպան.
նուեր է և շատեր ալ ձերբակալ եղեր են:

Եստե ամենայնիւ ժողովուրդը Եթ.
ուանիցի երկրին Եհաստանի հետ մի.
անալուն տարեդարձի տօնը կատարելու
հանդէսներ կը պատրաստէ եղեր:

Իտալից կայսեր եկած վերջին լուրերը
կը ծանուցանեն թէ Հոռի երկրէն անդա.
դար զիջուած աւազակները Կարօլի մէկ
քանի դաւաճներուն մէջ գտնուած աւա.
զակներուն հետ միանալով բաւական զօ.
րացի են, և մէկ քանի դաւաճաց գեղա.
ցիներն ու ստորին կողմի ժողովուրդներն
ալ անոնց կողմը անցնելով պայտասբու.
թիւնը մեծցրել է և տեղ տեղ կառավա.
րութեան զօրքերուն օտարակի զինադրու.
թիւն կընեն:

Պեռլենն օգոստ. 11 13 թուով լուր
կուտան թէ Ա արշաւայի մէջ ազգային
տօնը կատարուեր է տեսութեան արդե.
քին հակառակ: Բոլոր խանութիւնն ու
Պորսան գոցուեր է այն օրը և զիշէնն ալ
լուսավառութիւն եղեր է: Իտալիցի
զօրաց գունդեր թնդանօթներով բռնել
են զիտաւոր փողոցները և քանի մը մար.
դիկ ձերբակալ եղեր են:

Իօրթմուէթէն օգոստ. 11 13 թուով
լուր կուտան թէ Եստրիցի թագաւորն շո.
գեկաւաւով զիմաւորութեան դպրերէ Ե.
մէտի թագաւորին, և անոր հետ Օսպրն
գացեր են:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Միջեւ չորեքշաբթի օրը օգոստա.
վառ Ինքնակալը յանկարծական կերպով
Հէյպէլ կղզին ծովային դպրոց գնաց
տեսնելու համար թէ առաջին այցելու.
թեան ժամանակը տուած հրամանները
կատարուեր էին, և դպրոցին ամեն կըր.
թարաններն ու դասարանները պարտեցաւ
առանց թող տալու որ աշակերտներն ի.
րենց դարձնէր դարձեցնեն:

Նորին կայսերական վեհախառու.
թիւնը գոհ ըլլալով դպրոցին վիճակէն,
ուսուցիչները վարձատրեց և հրաման ը.
րաւ որ աշակերտաց վարձութեանը հա.
մար ջամաքը քաշուած հին պիւրիս սեղ.
նոր պիւր մը դրուի ծովուն վրայ:

Օգոստաւառ Ինքնակալը Պէլլրաս
գեղին մօտի Պէնտերն ալ աչքէ անցու.
նելու դիտաւորութիւն ունենալով, Պե.
թի. քոնթէն Պէլլրաս երթալու ճամբա.
յները քանի մը օրէ ի վեր նորօգելու կաշ.
խատուի:

Մայրաքաղաքի Քուռիտ օր Օրիան
լրագիրը լուր կուտայ թէ Եստրիցի
ան. քերուն մէջ վնաս կրող անձանց տրու.
ելիք դրամական հատուցումը որոշուեց հա.
մար մեծ տէրութեանց դեսպանները խոր.
հուրը պիտի ընեն մայրաքաղաքի մէջ:

Արսուի թէ Ա սեմ. Գուտտ փաշա.
լին արտաքին գործոց պաշտօնակց անուա.
նիլը Բ. Գուենն պաշտօնական կերպով
իրեն ծանուցուած ժամանակը, միանգամայն
իրեն յանձնուեր է որոշել Ա. Պոլս
դառնալու կամ տակաւին Եստրիցի
մնալու կարեւորութիւնը:

Միջեւ հինգշաբթի օգոստ. 3 5,
Գաղղեացոց Ա. Կարօլէն կայսեր օո.
նախմբութիւնը ըլլալով, Գաղղից դես.
պանատան մէջ կրօնական հանդէս և ետ.
քը ընդունելութիւն եղաւ: Մայրաքա.
ղաքի դեսպաններն յատուկ պաշտօնա.
տարներ զիջելով, և հոռիական դա.
ւանանքէ եղող դանազան աղագ կղերն
ալ անձամբ երթալով խնդակցութիւն
նին յայտնեցին Գաղղից դեսպանական
գործակաւար Այման կոմսին:

Օգոստաւառ Ինքնակալն ալ իր սե.
նեկապետներէն մէկը զիջեց: Բ. Գուեն
ալ առաջին թարգման Երթի պէյը
զիջեց:

Միջեւ չորեքշաբթի Պարսից Ա. Եա.
հին ծննդեան դարեդարձը ըլլալով, մեծ
հանդէս և ընդունելութիւն եղաւ Գըն.
տըրը Պարսից դեսպանատունը:

Կայսերական կառավարութիւնը և
ևրոպական տէրութեանց դեսպաններն
յատուկ պաշտօնատարներ զիջեցին իրենց
խնդակցութիւնը յայտնելու Ա սեմ. Աե.
րիման խանին որ Պարսից դեսպանին պաշ.
տօնը կը վարէ գործակաւարութեամբ:

ԱԶԳԱՅԻՆ

ԵՐՈՒՍԱԶԵՄԻ ԻՆԿԻՐԸ
Տես թիւ 495

Մինչև Սահմանադրութեան հաս.
տատուելը, կրօն Մեծնուան, եկեղեցա.
կան դասը գծի առ արտաքս՝ անգին օ.
ուսցին իշխանութիւնն էր: Սահմանադ.
րութենէն ետքը երկուքը եղաւ, և ե.
կեղեցին իր անկախութիւնը կորսնցուց ու
Եստրիցի հաստատածը մարդոց հաստա.
տածին ներքև մտնելու պարտաւորեցաւ:
Արշալի բառ՝ այնչափ սխալ կայ այս
խօսքերուն մէջ:

Մեծնուան սոյն տողերը հրատարա.
կելէն շարք մը առաջ Սահմանադրու.
թեան դէմ գանգատ ըրեր էր որպէս թէ
եկեղեցականաց իրաւունքները յայտնի

կերպով չէ ցուցըցած:
Թիւ որ չէ ցուցըցած, ուրեմն ինչպէս
կրնայ սահմանի տակ ձգած ըլլալ նոյն իրա.
ւունքները կամ Եստրիցի հաստատածը
մարդոց հաստատածին ներքև մտնուցած
ըլլալ:

Մեծնուան խոյս հակառութիւնները
ըրեր անցեր է, առանց մէկը կամ միւրը
սպառնուցանելու:

Մենք պիտի հաստատենք թէ այս
խօսքերուն ամենն ալ սխալ են: Սահմա.
նադրութիւնը եկեղեցականաց իրաւունքը
չափաւորած չէ, այլ ընդհակառակն ապա.
հովցուցած է: Կրօնը և կրօնականները
աշխարհականներու ձեռքը շահու և կը.
րից գործիք ըլլալէ ազատած է:

Սահմանադրութենէն առաջ Արօնա.
կան ժողովը Գերագոյն ժողովին ենթարկ.
եալ էր, և անկէ կախուած ունէր Գերագոյն
ժողովը կրնար Արօնականին որոշումը աւ.
րել կամ ետ դարձուցնել: Վերկայ չիբ.
նար ուրացուիլ, օրինակները պակաս չեն:
Սահմանադրութիւնը Արօնական ժողովը
իւր այս ենթարկեալ վիճակէն ազատելէ
զատ, անուամբ ալ էութեամբ ալ նախա.
պատիւ ըրաւ, ինչպէս որ արժան ալ էր:

Սահմանադրութիւնը շինող յանձնու.
ժողովը որուն մէջ երկու արքայիպիւ.
պոս, երկու վարդապետ և վեց քահա.
նայք կային, եկեղեցականաց այս ազատու.
թիւնը սպահովընելու կէտերուն մէջ
մեծ ընդդիմութիւն տեսաւ իրաշխարհա.
կան անդամներուն մէկ քանիկէն: Ես
ընդդիմութիւնը ընդգնելն էին Փափագ.
եան Գեորգ ազան, Մանանեան Պօղոս ա.
ղան, Պայսելիտան Թովմաճան ազան և
Սուրենեան Յօհաննէս աղան:

Ես յարգի անձներ միաձայն կը պնդէին
թէ Արօնական ժողովը Քաղաքականին ան.
կախ պէտք չէ ըլլայ թէ մեր եկեղեցական
ները կենցաղապարտութիւն չունին շատ ան.
գամ առանց վերջը մտածելու սխալ կամ
անխոհեմ որոշումներ կընեն: Մենք շատ
ժամանակ ազգային գործերու մէջ գտնը.
ուելով և Գերագոյն ժողովոյ անդամու.
թիւն ըրած ըլլալով, քանի քանի փորձե.
րը տեսած ենք, կրտսին, և օրինակներ ալ
կը պատուէին: Ա երջապէս կը պահան.
ջէին որ Արօնական ժողովոյ անդամոց
ընտրութիւնը առաջուան պէս Քաղա.
քական ժողովին ձեռքէն ըլլայ, այսինքն
ե. կեղեցականները համազումար ժողով ը.
նելով 28 եկեղեցական ընտրեն, ցուցա.
կը Քաղաքական ժողովին ներկայացընեն,
և Քաղաքական ժողովն ալ անոնց մէջէն
14 հոգի ընտրէ: Ե թէ որ այն ցուցակէն
դուրս արժանաւոր եկեղեցականներ գըա.
նուին, Քաղաքական ժողովը անոնք ալ
ցուցակին մէջ անցունէ, և Արօնական
ժողովոյ անդամ ընտրէ:

Ար պահանջէին դարձեալ որ Արօ.
նական ժողովն իր ատենագրութիւնները
Քաղաքական ժողովին ներկայացընէ և
մինչև որ ըրած որոշումները Քաղաքա.
կան ժողովոյ հաւանութիւնը չտանան
ի գործ չկրնան դրուիլ: Ա երջապէս կը
պահանջէին որ Քաղաքական ժողովին
անուեր առաջուան պէս Գերագոյն ժոց:

Հանձնագրովին եկեղեցական անդամներին անդամներ բողոքեցին այս պահանջներով. բուն դեմ, մանաւանդ իրենց ատենագրութիւնները. Քաղաքական ժողովները կայացրելու և ըրած ամեն որոշումներն անոր հաստատութեանը յանձնելու ատեն ջարհութեան դէմ. և երկար վիճարանութիւն եղաւ. Հանձնագրովին ուսումնական անդամները խնդրեցին չարութեամբ նկատելով, վերջինս յարկի անձանց ատենագրութիւնները կրօնի պատւոյն, եկեղեցականաց իրաւանցը և Սահմանագրութեան հիմնական սկզբանցը հակառակ դասն: Մտածեցին որ այն ատեն ջարհութիւնները չէին կրնար համաձայնել Սահմանագրութեան առաջին յօդուածին հետ որ կըսէ. «Ազգը Ռուսները ժողովով կը ներկայանայ և անոր մէջ նորոգութեամբ կը վարէ զազգային իշխանութիւնը: Ռուսները ժողովը՝ Ազգին ընդհանրական գործոց անորեւ նման իրեն պահելով, ստորական գործոց վարչութիւնը երկու ազգային ժողովներու կը յանձնէ՝ կրօնական գործոց մասը՝ Արծաթական ժողովը մը, քաղաքական գործոց մասը՝ Քաղաքական ժողովը մը: Իսկ խառն գործոց անորեւ նման ժողովը այս երկու ժողովոց առժամ մանակեաց մէկ տեղ պարզել ձեռնացած խառն ժողովին կը յանձնէ:»

Ինչպէս յայտնի կը տեսնուի, վերոյիցիայ առաջարկութիւններն այս արտադրութեանց բողոքովին հակառակ էին: Արծաթական ժողովը՝ Քաղաքականին ենթարկեալ ըլլալ նէ ժողով եղած չէր ըլլալ, այլ Տնտեսական, Ուսումնական և ուրիշ խորհուրդներուն կարգը կանցներ, ինչպէս որ իրաւամբ դատողութիւն կրնէին յանձնագրովին եկեղեցական անդամներէն ոմանք: Արծաթ վերջինս առաջարկութիւններն ընդունելու Սահմանագրութեան մէջ անցունել անհնար էր: Հետեւաբար յանձնագրովին ուսումնական անդամները եկեղեցականաց հետ միասին նստեցանք մէկ դի ձեռքերն այն առաջարկութիւնը, և Արծաթական ժողովին Քաղաքականին նախապատիւ և անկէ անկախ ըլլալը, և ընդհանուր ազգէն ընտրուելու իրաւունքը ձայնից առաւելութեամբ ընդունեցին ու Սահմանագրութեան մէջ անցուցին:

Մյայտնեալ պատմութեան ըստով, ժողովներ վկայ են յանձնագրովին եկեղեցական անդամները:

Մյայտնեալ Սահմանագրութիւնը Արծաթական ժողովին իրաւամբ վայրած նախապատուութիւնն ու անկախութիւնը իրեն տալով՝ եկեղեցական իրաւասութիւնը աշխարհականաց ազդեցութենէն ազատեց, և ազգային կրօնական գործոց ընդհանուր տեսչութիւնը կրօնականաց ձեռքը յանձնեց:

Սահմանագրութիւնը ասկէց աւելի բան չէր կրնար ընել կրօնական մասին՝ առանց եկեղեցականաց իրաւանցը դաշտելու:

Սահմանագրութիւնը ազգային վաճառք կրօնական տեսչութեան հոգն ալ բողոքովին եկեղեցականաց թողովով, անոնց ուսումնական և սնտեսական բարեկարգութեանը միայն գրադած է, և այս մասին ալ դարձեալ եկեղեցականաց գործակցութիւնը խնդրած է:

Իսկ իւրաքանչիւր վանքի հոգաբարձութեան համար տեղացի երկու դործակալ ընտրելու առաջարկութիւնը յանձնագրովին եկեղեցական անդամներն ըրած են, ինչպէս որ կը վկայեն յանձնագրովին ստորագրեալ ատենագրութիւնները:

Ըստոյմէ յայտնի կը տեսնուի որ Հայաստանեայց եկեղեցւոյ և եկեղեցականաց նկատմամբ Սահմանագրութեան որոշումներով ինքները Վաթիկանի Վեճմալի ըսածին բողոքովին հակառակն են: Եկեղեցականաց դասը՝ ինչպէս վերը ըստինքը Սահմանագրութեան առաջ Վաթիկան առաջին իշխանութիւնը չէր, այլ աշխարհական իշխանութեան ենթարկեալ էր: Պատրիարքին ու Արծաթական ժողովին

իրաւասութիւնը քանի մը աշխարհակաճաց կամքին ու կրօնը հպատակ և դործը էր: Սահմանագրութիւնը վերջուց այս ատենագրութիւնը, և կրօնականաց իրաւասութիւնը անկախ ըրաւ աշխարհականաց ազդեցութենէն:

Մյայտնեալ էր որ սահմանագրական յանձնագրովին եկեղեցական անդամները որ Ազգի գիտնական և բանիբուն ձանջուած վարդապետներն ու քահանայներն էին, Սահմանագրութեան վերջին ընթացումը առանց դիտողութեան ընդունելին ու գոհութեամբ ստորագրեցին:

Մյայտնեալ էր մանաւանդ որ Սահմանագրութիւնը ընդունող ու հաստատող Ռուսները ժողովին մէջ նախկին Պատրիարք ամենապատիւ Յակոբ սրբազանը ամենէն առաջ յայտարարութիւն ըրաւ բողոք եկեղեցական դատուն բերելէն թէ այս Սահմանագրութիւնը Հայաստանեայց եկեղեցւոյ և եկեղեցականաց իրաւունքն ու պատիւը ապահովուցած է: Յիշեալ Սրբազանին ձայնակից եղաւ համբուն եկեղեցականաց դասը: Այդն վիշտով ինքնը տուաւ նաև արքունի ճարտարապետ մեծապատիւ Պարիան Վարպետ ամիրան և աւելցուց թէ մէջը ամենէն դաշտելը բան մը չկայ, ընդունելի է: Մտոր վկայ Ռուսները ժողովը միաձայն վճռեց որ ստորագրուի, և ժողովականներուն ամենն ալ ստորագրեցին, նախ եկեղեցականները և ապա աշխարհականները:

Մասնի խորհրդով, քննութեամբ և ազատ հաստատութեամբ ընդունուած ու հաստատուած Սահմանագրութեան մը դեմ Վաթիկանի Վեճմալի և Չամուրճեան Պ. Յ. Տերոյեցին ըրած դիտողութիւններուն որչափ անտեղի ըլլալը, ինչհոգին յառաջ դալը և ինչ արժեք ու նենայալ որջախա ընթացողաց կը թողուք դատել:

Պիտ Լուսին:

Սահմանագրութեան 13րդ յօդուածին համաձայն ամսոյս ցին շաբաթ օրը Քաղաքական ժողովոյ դիւանին հրաւիրուողը ազգային երեսփոխանաց Ռուսները ժողով գումարեցաւ Պէ յօդուած Վարկեան վարժարանը:

Նախկինաց տոնակին մէջ Սահմանագրութեան և ազգային վարչութեան պատուոյն վտանգի մէջ ըլլալը ծանուցուած ըլլալուն, երեսփոխաններէն և անդամներէն ընդմեջ մաս մը (70 երեսփոխան և 29 անդամակից) վտելագեր էին ներկայ գտնուելու:

Ռուսները ժողովը շատ պարագայներու մէջ իւր վստահութիւնն ու շնորհակալութիւնը հրապարակաւ յայտնած ըլլալով ազգային վարչութեան, չէր կրնար անողայ մնալ երբ որ կը լսէր թէ անոր պատիւը և մանաւանդ բողոք ազգին սիրելի Սահմանագրութիւնը վտանգի մէջ կը գտնուի:

Նախկինաց տեսնուած Վարպետ Հին ամբողջ պարագայ էր, և դիւանը յուսալով որ Վորին սրբապետութիւնը կուգայ, ատենին բացուիլը բաւական ուշացուց: Արծաթական օրոշեալ ժամանակը քանի մը ժամ անցնելէ ետև ատենար բացուեցաւ:

Վտենայեալ է Յէնտին Քաղաքական ժողովոյ դիւանին խօսք տուաւ, և հետևեց:

«Սահմանագրական յանձնագրովը խոհական նախատեսութեամբ պարտք համար էր Ռուսները ժողով գումարուելէն քանի մը օր առաջ սահմանագրութեան տեսնականներէն մէկ մէկ օրինակ դրկել բարձրաստիճան եկեղեցականաց և Արքաներուն, որպէս զի պարագով և ուղարկութեամբ կարգան, քննել, և զիտողութիւն մը ունենել ընդհանուր ժողովին մէջ յայտնել:»

«Նրա իրանաց ստոնակները ուրբաթ իրիկունը դրկուելուն համար շատերուն ձեռքը չէին հասեր և շատեր ալ շաբաթ ըլլալուն պատճառաւ չէին կրցեր ժողովին երթալ:»

տուեալ տեղեկութիւնները տրուեցան ազգային երեսփոխաններուն:

Յուշի 12ին գումարուած Ռուսները ժողովոյն որոշումը ետ ձգել տարու համար, վարչութեան կամ լաւ ևս Սահմանագրութեան և օրինուորութեան հակառակորդները նոյն իրիկունէն սկսեցին սրբազան Պատրիարքին բողոքովը պաշարելու և խռովութեան սպառնալիքներ ընելու: Վորին սրբապետութիւնը, փոխանակ անոնց առջև դնելու Ռուսները ժողովը, Սահմանագրութիւնը, ազգային վարչութիւնը և իւր իշխանութիւնը, և փոխանակ այս կերպիւց ցուցունելու անոնց ընթացքին ապօրինաւորութիւնը, անհիմն երկիւղ մը նշաններ ցուցուցին և առաջին զին զին մը ըրեր է՝ դիւանին շրջաբերականը ցուցել չի տալով և սպառնալիքներուն յոյսեր տալով: Բայց միանգամայն օրինաւորութեան շաւիղէն դարտուելու պատասխանատուութիւնը մինակ վրան անուշ չուզելով, յուլիս 15ին այսինքն նոյն ընդհանուր ժողովին երեք օր ետքը Արծաթական և Քաղաքական ժողովները Պատրիարքարան գումարեցին:

Մյայտնեալ ժողովին երեք առաջարկութիւն եղեր է. մէկը սրբազան Պատրիարքին կողմէն, այսինքն նախորդ Ռուսները ժողովոյ որոշմանը համաձայն երեսփոխանաց քուէն կամ կարծիք ուղարկու համար դիւանին շրջաբերականը չի ցուցել ու նորին Ռուսները ժողով գումարել: Արքաները առաջարկութիւնները երեք է. 1. քաթիւն և սպինքն յուլիս 12ին Ռուսները ժողովոյն որոշմանը համաձայն դիւանին շրջաբերականը բաժնէ, քուէները հաւաքել, բայց քուէհամար չի կատարել կամ թէ քուէհամարն ալ ընել, բայց արգիւնք չի հրատարակել ու լքելուցայ Պատրիարքին հրամանին սպասել, այն է՝ ազգային երեսփոխանութեան կարծիքը Վորին վեհապետութեան համաձայնեցրելու:

Նորոգը առաջարկութիւնը եղեր է Մուպահեմեան մեծապատիւ Յակոբ ազգային կողմէն, այսինքն քուէհամարէն առաջ Արծաթական համագումար ժողով գումարել, և այն ժողովոյն որոշմանը ենթարկել ընդհանուր երեսփոխանական ժողովոյն որոշման գործադրութիւնը կամ հերքումը:

Արծաթական և Քաղաքական ժողովները համաձայն որոշել են նոյն օրը թէ այս երեք առաջարկութիւններն ալ անդուրանելի են իրրեւ հակառակ Սահմանագրութեան, վնասակար ազգային օգտին և վարչութեան պատուոյն:

Խառն ժողովին այս երեսփոխանները որ բողոք ժողովականներէն և Ս. Պատրիարքին ստորագրած է, առնելէն ետքը, սրբազան Պատրիարքը գործեալ անոր համաձայն չէ վարուել: Քուէհամարը ետ ձգել և Ռուսները ժողով գումարելու պատասխանատուութիւնը իւր վրան առնելով, և յուլիս 21ին օրը այն անկարգութիւնները պատահեցան:

Այն իրիկունը Քաղաքական ժողովը խորհուրդ ընելով, սրբազան Պատրիարքին հետ պաշտօնական յարաբերութիւնը ի կախութեանը հարկ համարել է, և սրբազան Պատրիարքին նամակ մը ղրկելով խնդրել է որ Սահմանագրութեան նկատմամբ բռնելը ընթացքը ժողովին խնայել:

Վորին սրբապետութիւնը չէ բարեհաճել արտաստանելու ազգային վարչութեան նամակին, և նորին խառն ժողով հրաւիրել է Արքաների խնդրոյն վկայ խորհուրդ ընելու համար:

Արծաթական և Քաղաքական ժողովները, ազգային երեսփոխանաց պատիւը պահելով չէն ուղեր Ռուսները ժողովոյ ու որոշմանը ներկայացած խնդրոյ մը վկայ նորին խորհուրդ ընել, մանաւանդ որ իրենց ալ պատիւը կ'անարգուէր յուլիս 15ին խառն ժողովոյն որոշուցը հակառակ գործողութիւններով, որոնց պատասխանատուութիւնը սրբազան Պատրիարքը իւր

վրան էր առած:

Սրբազան Պատրիարքը հարկ ազգային կրկին ժողովոյ բողոքէն աւելի ուշաբուրութեան օրժանի համարել է քանի մը հակառակախորհուրդ անձանց խրատները. և Քաղաքական ժողովին նորին հրաւերը զըրկեր է որ երթայ դիպուած խել մը ազգային գործերը անօրինէ:

Քաղաքական ժողովը սոյն հրաւերին պատասխան մը դրեալով, Սահմանագրութեան և վարչութեան պատուոյն զազգ կետեղը ցուցուցեր է, և ազգային Պատրիարքարանը անկարգութեանց ասպարէզ դառնալը յիշեցրելով՝ խնդրել է որ Ռուսները համար ժողով գումարուի և Արքաների մայր խնդրը լուծուի որպէս զի ուրիշ ազգային գործոց գրեցելու կարելիութիւն ըլլայ:

Մտոր ալ համաձայն չէ ցուցուցելով Վորին սրբապետութիւնը, և խնդրելով նորին օրինաւորութեան շրջանին մէջ մնալու ցուցունելու աշխատելու տեղը, ինչպէս որ կը պահանջէ Սահմանագրութիւնը, ձգելով ազգային վարչութիւնը, և Արծաթական ու Քաղաքական ժողովներէն դուրս լուսակաւար և այլ տեղուանց ապօրինաւոր ժողովներու մէջ գտնուելէն ետև, անցեալ չորեքշաբթի օրը համագումար անուշով եկեղեցականաց ժողով մ'ալ գումարել և խել մը հակառակ որոշումներ ըրեր է:

Մյայտնեալ ժողովներէն անուշով վերաբերեալ ատենագրութիւնները տեղեկագրելու և թղթագրութիւնները կարգաւորելու ազգային երեսփոխանութեան կարծիքն ու կամքը հասկնալու ըզրկեց:

Ժողովականք աս ամենը լսելէն ետև, յայտարարութիւն ըրին թէ Արծաթական և Քաղաքական ժողովները օրինաւորութեան ձայնէն չեն խտորած և Սահմանագրութեան համեմատ վարուած են: Իսկ սրբազան Պատրիարքը գծադրաբար Սահմանագրութեան շաւիղէն դարտուողը ապօրինաւոր ընթացքի մէջ ինկեր է:

Իսկ անցեալ չորեքշաբթի օրը Պատրիարքարան գումարուած համագումար անուշով ժողովին վկայ ժողովականք հետեւեալ յայտարարութիւնը ըրին համաձայնութեամբ:

Արովհետև եկեղեցական համագումար ժողովը՝ առանց վարչութեան գիտութեանը՝ այսինքն առանց գոնէ Արծաթական ժողովին գիտութեանը՝ Պատրիարքը ինք իր զիտուն հրաւիրել է:

Արովհետև Ռուսները ժողովոյ առջև դրած ինքնուր մը վկայ վճիռ տալու համար գումարել է նոյն եկեղեցական ժողովը, որով Ռուսները ժողովոյ իրաւասութիւնն ու իշխանութիւնը արհամարհուել է:

Արովհետև Սահմանագրութեան որոշած անդամներէն աւելի թուով և առանց որ և է կանոնի մը հետեւելու կազմուել է նոյն համագումար ժողովը, ուստի յիշեալ ժողովը արտօրինաւոր է և որոշումներն ալ անպաւել կը սեպուին:

Եկեղեցականաց դասը՝ ալ միաբերան յայտարարութիւն ըրին թէ յիշեալ համագումար բուռած ապօրինաւոր ժողովին որոշումներուն մէջ ընդգծմ հաւատոյ ուրոշում ալ եղած ըլլալով, բաց է ի բաց կը հերքեն թէ՛ այն ժողովը և թէ՛ ըրած որոշումները:

Արծաթական ժողովականները համաձայնութեամբ իրենց վստահութիւնը և հաստատութիւնը յայտնեցին ազգային վարչութեան ամեն գործողութիւններուն վրէժն:

Երկու արք եպիսկոպոս, երկու վարդապետ և տասնի չափ քահանայք ներկայ էին ժողովին: Վարդապետներուն մէկը և քահանայներն ոմանք անցեալ չորեքշաբթի օրուան եկեղեցականաց ժողովին ակամայ և իրենց խղճին հակառակ ստորագրութիւն տալու հարկադրեալ ըլլալով յետ կուսեցին այն ստորագրութիւններն իրրեւ ապօրինաւոր եւ անպաւել, և իրանցուցին որ ուրիշ բազմաթիւ եկեղեցականք ալ կան որ նոյնպէս յետ կը կոչեն իրենց օրոշած ստորագրութիւնը:

Թեան արարիկայ նկատելով, կրթութեան հարկերը...

Կ. Կանայք թէ՛ մարդը եւ թէ՛ ազգը նախապատրաստող, նախախնամող, նախասանձանել...

Գ. Թէ՛ բանասիրաց ընթերցումըն կրթնազանելու, թէ՛ նորուսից գրականութեան...

(*) Վերջին ստեղծներս հայերէն երգիծաբանութիւն բառով վերոյշատակեալ բանաստեղծութիւնն է:

գիտելով, որ մարդիկ գիշեր ցորեկ լալու համար միայն աշխարհ եկած չեն:

Գ. Գարցոցայ եւ ընտանեաց պիտոյիցը միապէս պատշաճեցուցած քանի մըն ալ դասադիրքը...

Զ. Լուսանկարը, որուն ծննդանք հանդիսատես եղանք, եւ զարգացմանը ոտն առ ոտն հետեւելով...

Ե. Մեր թերթը հնգետասնօրեայ ըլլալով, սիրապէս անօրեայ լրաց օրագիր չի կրնար ըլլար...

Ը. Մտաւոր ամիսն երկու անգամ պիտի հրատարակի, ութամս երկրիջամն, եւ ընթերցասիրաց կողմէն ամսական հատուցումն է 20 ֆրանք:

մար. անկէ անդին ճամբուն ծախքն անուղին վրայ է:

Մ. Այս տարին սկսանող վիդասանութեանը նիստ պիտի ըլլան, ըստ զուարճութեան, կաւ Ստաստ Լեւոնի, ըստ ըրջութեան, Արեւիկա Կարապետեան:

Ե. Գ. Մտաւոր ամիսն յաջողութեամբ յօտարամիտ գնահատներուն պատշաճ թուի նէ, կը համարձակինք, տպագրութեան սկզբնաւորութիւնը...

Ազգային ժողովոյն ատենապետ իրաւաստէր Ս. Վիլչն Եֆէնտիլյն յանձնելով, որ ի նորոն գրականութեան եւ մեր հասակակից բարեկամութեան այս մասին խնամակալութիւնը յանձն առած է, կա՛մ:

M. K. B. Missak.

Rue duFaubourg Montmartre, 13. Paris.

Եւ կամ, փարիզ օրագրին գործակալ Մուրատեան Պ. Եղուարդին յանձնելով, Գումարը մատուցանող անձանց ընդունելութեան անդորրագիր պիտի արուի:

Մասնագրութեան անձնակազմը Թ. Պ. ՄԻՍԱԿԱՆ

ՍՆՆՈՒՑՈՒՄ Եւստուրնէ մինչև 31 օր, ոչ օր Երզնան Վահրէն աննիկը տալիք ունի:

ՍՆՆՈՒՑՈՒՆԸ Սամաթիա Վարդ Խարութեան մատուցին դուրը հիւսիսի բորեակք գէ՛մ գեղեցիկ գետին մը կայ ծախու:

ՉԿՆԵ ԻԻՂ Մարտը եւ անուշահամ Գաղղացի Տարթը Օթիէ բժիշկի Եւ Է գրիէ գեղագործին պատրաստածը:

Աս րագիրը շարքն անգամ մը կէլլէ զորեքարքի օրերը: Բն կրգե կրնայ տոբրագրելի Կ. Պոլիս Զինիլի խանը րագրոյ գրասենեակը:

Ս. Մուրատեան: Թ. Երզնան Վահրէն: Մ. Արեւիկա Կարապետեան: Ս. Վիլչն Եֆէնտիլյն: Պ. Եղուարդին: Մ. Արեւիկա Կարապետեան: Ս. Վիլչն Եֆէնտիլյն: Պ. Եղուարդին: Մ. Արեւիկա Կարապետեան:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

Table with 2 columns: Item name and price. Includes items like 'Բրտնա 31 օր պայմանաժամ' and 'Փարիզ'.

Table with 2 columns: Item name and price. Includes items like 'Տեղորոշ ընտիր ասկ' and 'Մէլէ Պրոսա ընտիր ասկ'.

Table with 2 columns: Item name and price. Includes items like 'Տաճկաստանի Թիթիթի Էնկիւրի' and 'Սեղանի Գարա շինար'.

Table with 2 columns: Item name and price. Includes items like 'Եւստուրնէ մինչև 31 օր' and 'Սամաթիա Վարդ'.

Table with 2 columns: Item name and price. Includes items like 'Փոխարին ԳԱՄՊԻՈ ԳԻՆԵՐԸ' and 'Լօնտրա 31 օր պայմանաժամ'.

Table with 2 columns: Item name and price. Includes items like 'ՄԵՏԱՔԱՆ (ԻՓԷՔ)' and 'Տեղորոշ ընտիր ասկ'.

Table with 2 columns: Item name and price. Includes items like 'ՍԵՂԱՆԻ ԲԵՐԻՔ' and 'Խանիկ Ռիօ եւ Գափի'.

Table with 2 columns: Item name and price. Includes items like 'ՍԵՂԱՆԻ ԲԵՐԻՔ' and 'Խանիկ Ռիօ եւ Գափի'.

Table with 2 columns: Item name and price. Includes items like 'ՍՈՒՄ 9 ՕԳՈՍՏՈՍ' and 'Ցորեն Բուսիլի'.

Table with 2 columns: Item name and price. Includes items like 'ՍՈՒՄ 9 ՕԳՈՍՏՈՍ' and 'Ցորեն Բուսիլի'.

Table with 2 columns: Item name and price. Includes items like 'ՍՈՒՄ 9 ՕԳՈՍՏՈՍ' and 'Ցորեն Բուսիլի'.

Table with 2 columns: Item name and price. Includes items like 'ՍՈՒՄ 9 ՕԳՈՍՏՈՍ' and 'Ցորեն Բուսիլի'.